ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 219 – Ա 02 հունիսի 2020թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 19-ի N 335-Ն որոշումը

որոշում եմ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի օպտիմալացման արդյունքում ազատված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դվոյան Սևակ -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Բիձյան Հակոբջան -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ
Սահակյան Դավիթ -	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Էլիզբարյան Գայանե -	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Պողոսյան Լիլիթ -	«Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ

2. Հանձնաժողովին՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի օպտիմալացման արդյունքում ազատված հանձման ենթակա անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը մինչև 2020 թվականի հունիսի 15-ը ներկայացնել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե:

2) Մինչև 2020 թվականի օգոստոսի 10-ը ավարտել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի անշարժ գույքի հանձման աշխատանքները:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

02.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ